

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Д И С К У С С И И

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ԱԹԱՆԱՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայերեն հնագույն թղթյա ձեռագրի (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2679)¹ ուսումնասիրությունը հայագիտությունը հարստացրեց մի շարք հայտնություններով, որոնցից մեկն է Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը: Ձեռագիրը պարունակում է աշխարհիկ բովանդակությամբ արժեքավոր շատ երկեր և այդ բնույթի հնագույն ժողովածուն է: Հնագույն է նաև իր գրանյութ թղթով, որը պատրաստված է Անի քաղաքում և հայկական առաջին թուղթն է: Մեղ հայտնի առաջին ձեռագիրն է, գրված բոլորգրով: Կազմված է երկու տարբեր ժողովածուներից, ընդ որում երկուսի խմբագիր-կաղմողը Դավիթ քահանան է, գրիչը՝ իր որդի Ղուկասը: Առաջին ձեռագիրը գրված է 981 թ., երկրորդը՝ նրանից որոշ ժամանակ հետո²:

Երկրորդ ձեռագրի առաջին երկը ժամանակագրություն է և ունի այսպիսի խորագիր. «Երբայեցուց ժամանակագրութիւնք, Եղիմացուց, Հոռոմոց, Եգիպտացուց, Հեղղենացուց, Եթիովպացուց, Ասորուց, Յունաց»:

Լաւ համարեցա զՀոռոմոցն զՍեբեայ եւ զԱթանասի ժամանակագրութիւնս շարագրել³: Ուրեմն, Դավիթ քահանան հորինում է մի ժամանակագրություն, որի մաս կազմող Հոռոմոց ժամանակագրությունը՝ խոստանում է շարագրել ըստ Եվսեբիոս Կեսարացու և Աթանասի ժամանակագրությունների:

Ժամանակագրությունն սկսվում է «Ադամ ամաց Մլ ծնանի զՍէթ յԵւայէ», վկայությամբ, և հասնում է մինչև Նոյ («Այս ըստ Եւթանաոնից թարգմանչացն է»)՝ Այնուհետև շարունակում է Սեմից մինչև Աբրահամ, Իսահակից մինչև Մովսես և Եսու Նավեա որդի: Վերջինիս մասին բավական շատ է վկայություններ: Չբավարարվելով եղածով, «Ի Թուոց» խորագրի տակ Աստվածաշնչի համապատասխան գրքից բանաբաղված են նրա մասին այլ վկայություններ: Ապա Երբայեցուց ժամանակագրությունը շարունակվում է մինչև Սեդեկիա և գերեզարծություն⁵:

«Երբայեցուց ժամանակագրութեան» սույն հատվածի համեմատությունը Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութեան» համապատասխան հատվածների հետ ցույց տվեց, որ դրանք տարբեր գործեր են: Չի համընկնում նույնիսկ «Ըստ Եւթանաոնից թարգմանչացն» հատվածը: «Երբայեցուց ժամանա-

¹ «Մատենան գիտութեան եւ հաւատոյ, Դավթի քահանայի» խորագրով լույս է տեսել երկու գրքով. գիրք Ա, նմանահանություն, գիրք Բ, նմանատպություն, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթեոսյանի. Երևան, 1988:

² Այս ձեռագրերը ինքնուրույն կյանքով ապրում են մինչև 1225 թ., երբ Գիշի որդի Հովհաննես ավագերեցը գնում և երկու ձեռագրերը միացնում է իրար՝ մի կազմի մեջ: Մինչ այդ, երկրորդ ձեռագիրը XI դարի վերջում ընկնում է ոմն Գորգի ձեռքը: Սա սկզբում գտնվող ընդարձակ ժամանակագրությունը գրում է սյունակների մեջ և մի քանի պրակ մատենագրական այլ երկերի հետ մուծում ձեռագրում: 1585 թ. ձեռագիրը, սկզբից, միջից և վերջից բավական շատ թերթեր կորցրած, նորից կազմվում է Սիմեոն Ապարանցու ջանքերով: Այս վթակում էլ հասել է մեր օրերը:

³ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2679, էջ 156ա (այսուհետև կնշենք միայն համապատասխան ձեռագրի համարն ու էջը):

⁴ Նույն տեղում, էջ 157բ:

⁵ Նույն տեղում, էջ 158բ:

կազրութեան» մեջ հիշվում են բոլոր կանայք, որոնցից սերում են հաջորդ տոհմավազները կամ նահապետները: Զի համընկնում Սեմից սերած ժառանգության հերթականությունը, Եվսեբիոսի ժամանակագրության մեջ բերած Եթանասինց, Հրեից և Շամրտացուց ցուցակներում Ափրակասագից հետո չկա Կայինան⁶:

«Երրայեցուց ժամանակագրութիւնից» հետո, 158թ էջի ստորին մասում, սկսում է «Հռոմովմաց ժամանակագրութիւնը», որից միայն սկզբի վկայությունն է պահպանվել Ղուկաս գրչի գրությամբ: «Աւգոստոս թագաւոր ամս ՄԶ, Սա զսեքստոս ամիս աւգոստոս անուանեաց վասն իւրոյ ծննդեան: Ի սորա ԽԲ ամին ծնանի Քրիստոս, ի սկզբան ամին Արգարա Հայոց թագաւորի: Եւ արդ եդի ի կարգի»⁷: Հռոմովմաց ժամանակագրությունը կազմված է Եվսեբիոսի և Աթանասի ժամանակագրություններից: Այսինքն այդ ժամանակագրությունների համաշարադրանքն է: Եվսեբիոսի «Ժամանակագրութեան» մեջ կարդում ենք. «Կայսր Սեբաստոս Հռոմաւիտոս, որ եւ Աւգոստոս ամս ՄԶ և ամիսս Զ... Աւգոստոս Սեբաստոս անուանեցաւ և զՍեքստոս ամիս աւգոստոս անուանեաց... ԽԲ, Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ ի Բեթղահէն Հրեաստանի ծնանի»⁸: Անշուշտ այս վկայությունների հիման վրա Դավիթ քահանան ստեղծել է վերը բերված վկայությունը, բացառությամբ վերջին՝ «Ի սկզբան ամին Արգարա Հայոց թագաւորի»⁹ տողի, այսինքն «Հայոց թագավորի» մասին վկայության, որը Եվսեբիոսի մոտ չկա, ուրեմն այն վերցված է Աթանասից: «Եւ արդ եդի ի կարգի» նախադասությունը Դավիթ քահանայինն է, որով ներկայացնում է ժամանակագրության շարադրման էությունը:

Հաջորդ թերթից (159) փոխվում են թուղթը, գիրը, թանաքը, ժամանակագրության շարադրման ձևը (ազատ շարադրման փոխարեն՝ սյունակներում) և եղանակը (համառոտված): Չորս ուղղահայաց գծերով ստեղծված սյունակներից առաջինում վերից վար գրված են փրկչական թվականությունները, երկրորդ սյունակում՝ հռոմեական կայսրերի, երրորդում՝ հայոց թագավորների գահակալության տարիների շարքերն են: Այս սյունակների ձախ կողմում գրված են հռոմեական կայսրերի անունները և գահակալության տարիների քանակը, իսկ աջում՝ հայկականը: Նույն տեղերում, համապատասխան թվականի դիմաց հռոմեաց և հայոց պատմություններից քաղված վկայություններ են:

Ժամանակագրության առաջին տարին ունի հետևյալ տեսքը.

Աւգոստոս ՄԶ	Ա	ԽԲ	Ա	Արդար	ԼԶ
-------------	---	----	---	-------	----

որը «Հռոմովմաց ժամանակագրութեան» նախորդ էջում գրված առաջին վկայությունն է՝ համառոտված («Աւգոստոս թագաւորէ ամս ՄԶ, Ի սորա ԽԲ ամին ծնանի Քրիստոս, ի սկզբան ամին Արգարա Հայոց թագաւորի»):

Այնուհետև, յուրաքանչյուր էջում, երկու շարքով, եռասյունը հասցրվում է մինչև փրկչական 35 (305) թվականը, որի դիմաց գրված է «Ելն ի վիրապէն»¹⁰. այս վերաբերում է Գրիգոր Լուսավորչին, որտեղից ավելացվում է մի սյունակ ևս, ուր նշվում է հայոց կաթողիկոսների շարքը: Քառասյունակը շարունակվում է մինչև հայոց Արշակունյաց թագավորության ավարտը¹¹, և վերանում է հայոց թագավորների սյունակը, ապա եռաշարք

⁶ Եվսեբիոս Կեսարացի. Ժամանակականք երկմասնեայ, մ. Ա, Ժամանակագրութիւն պատմական. Վենետիկ, 1818, էջ 116, 121, 126:

⁷ Զեռ. № 2679, էջ 158թ:

⁸ Եվսեբիոս Կեսարացի. Ժամանակականք, մ. Բ, էջ 252, 256, 260:

⁹ Զեռ. № 2679, էջ 158ա:

¹⁰ Զեռ. № 2679, էջ 161ա:

¹¹ Նույն տեղում, էջ 161բ:

գնում է մինչև վերջ՝ ՆՁԴ (1035) թվականը: Վերջին վկայությունն է «ՆԶԱ (1032) թագաւորէ Միհայ», և նշված են նրա թագավորության շրջանը՝ 1032—1035 տարիները: Սրանից հետո միայն տարեթվերն են գրանցված, և ավարտվում է ՇԼԲ 1083 թվականով¹²:

Ժամանակագրության սյունակային հատվածը Ղուկասի ձեռքով գրված ժամանակագրության վերաշարադրումն է, այսինքն X դարում սկսած և մինչև 1035 թ. հասցրած Ղուկասի ձեռքով գրած ժամանակագրությունն է, որ մեզ է հասել այլ թղթի վրա, Գորգի գրությամբ և խմբագրությամբ, սյունակների մեջ: Այս իրողության ապացույցն է առկա ժամանակագրությունը և նրա վերջին սյունակում պահպանված հիշատակագրությունը. «Այս Գորգ էր գոհացող, որ փոխեաց Ղուկասու գրած Կայսերքս եւ այլ իմն արար, որպէս եւ ինքն կամեցաւ, եւ Տէր ողորմի իւրմանն, ամէն»¹³:

Իսկապես, Ղուկասի գրած «Կայսերքը» (ժամանակագրությունը) Գորգը փոխել է, ինչպես ինքն է կամեցել: Ուրեմն Գորգի ձեռքով գրված սույն «Ժամանակագրությունը» կամ «Կայսերքը» Ղուկասի գործն է, որը նա հորինել էր իր հոր՝ Դավիթ քահանայի հետ:

Ժամանակագրությունը նախօրոք Ղուկասի գրչին պատկանելու փաստ է նաև Ղուկասի ձեռքով գրված «Կայսերքի» կամ «Հոռոմոց ժամանակագրութեան» առաջին վկայությունը. «Աւգոստոս թագաւոր ամս ՄՁ» և այլն¹⁴, որը կրկնվում է նաև Գորգի գրությամբ, «Ժամանակագրության» սկզբում, համառոտ:

Վերջապես երրորդ ապացույցը ժամանակագրության վերջին՝ 165 թերթի բնագրում գրված Դավիթ քահանայի հիշատակարանն է: Արտագրելով Ղուկասի «Կայսերքը», արտագրել են նաև հոր՝ Դավիթ քահանայի հիշատակարանը, ուր ի մասնավորի ասված է. «Կամ եղև եւ իմ ժառանգիս Աստուծոյ Դաւիթ նորոգել զբազմազան բերաւոր ծաղկաւք զարդարեալ զհոգիանորոգ և զաստուածատուր շնորհս, զոր տուաւ ի հոգւոյն սորոյն սրբոց վարդապետաց, ուղղափառ ախոյեանաց սրբասուն կրանաւորաց, արիացեալ նահատակաց, հեզ և հանդարտ հայրապետաց, որոյ և կցորդ բանի յիւրեանց կաշկանդեալ կարկեցուցին զաւժնորդս հաւատոց...»¹⁵: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ սյունակներում գրված ժամանակագրությունը Դավիթ քահանայի և Ղուկաս գրչի շարադրանքն է՝ մեզ հասած Գորգի գրությամբ և խմբագրությամբ¹⁶:

¹² 1035 թ., հավանաբար, Ղուկաս գրչի մահվան տարին է, ուր գազարում են վկայությունների գրանցումները:

¹³ Ձեռ. № 2679, էջ 165ա:

¹⁴ Ղուկասի «Ժամանակագրությունը» փոխված վիճակում, այսինքն աղյուսակներում, գրադեցնում է վեց ու կես թերթ (159—165ա): Ժամանակագրութեան հետ միաժամանակ գրվել են հաջորդ թերթները. գրանցից 189—194-ը կրկնագիր են, այսինքն գրածը շեջել են և նույն թերթի վրա նորից գրել: Փնտրությունը ցույց տվեց, որ այդ թղթերը միեւնույն ձեռքով գրված նույն աղյուսակներից են, ուր ամեն մի էջում գետնգրված է այժմ երկու շարքով գրված ընդգրի մի շարքը: Բայց որովհետև նյութը այդպես ավելի շատ թերթ կգրադեցներ, ուստի նորից են գծել ու գրել ուրիշ թերթերի վրա, յուրաքանչյուր էջում մի շարքի փոխարեն երկու շարք տեղավորելով, ինչպես որ այժմ կա, իսկ միաշարք գծած թերթերը դեղին ներկով ծածկել են և վերստին օգտագործել: Դրանք մեզ հայտնի առաջին թղթյա կրկնագրերն են:

¹⁵ Ձեռ. № 2679, էջ 165բ:

¹⁶ Գորգի մասին վերը բերված հիշատակագրությունը, Դավիթ քահանայի հիշատակարանը և ժամանակագրության սկզբում Աթանասի անվան հիշատակությունը անհայտ են մնացել Վ. Հակոբյանին, որը 1956 թ. «Մասնականագրություններ, XIII—XVIII դդ.» 2-րդ հատորում հրատարակում է սույն ժամանակագրությունը (էջ 159ա, 165ա) «Հոգհանես Ավագերեցի ժամանակագրությունը (XIII դ.)» վերնագրի տակ: Նրան հիմք է տվել Հովհաննեսի հիշատակագրությունը, ուր ասված է զգրկունքս գեեցի և յիտ ՄԾԴ (254) ամի զցանկս յաւրիների ՌԶԴ (1225) թուականիս: Ինչպես տեսնում ենք, այստեղ գրքերը գնելու և ցանկեր կազմելու մասին է խոսքը, և ոչ ժամանակագրություն գրելու, խմբագրելու կամ փոխելու ինքը հրատա-

Այժմ մի ուրիշ, կարևոր հարց է ծագում. Գորգը Դավթի և Ղուկասի ժամանակագրությունը ձևափոխելիս և համառոտելիս հարազատ է մնացել ըրնագրին, թե ոչ: Ղուկասից կատարված արտագրության օրինակ չունենք, բայց Եվսեբիոս Կեսարացու երկը կա, որը և հնարավորություն է ընձեռում Գորգի ընդօրինակությունը համեմատել նրա հետ, որպես Ղուկասի «Կայսերի» առաջին սկզբնաղբյուրի:

Գորգի ընդօրինակությունը մենք համեմատեցինք Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» վեներտիկյան 1818 թ. հրատարակության համապատասխան վկայությունների հետ (Հրատարակության համար հիմք է ծառայել XII դարում դրված հայերեն ձեռագիրը): Համեմատությունից պարզվեց, որ պատմական փաստերը, դեպքը, ժամանակը, տեղը և այլն ներկայացված են հաճախ առանց, ճշգրիտ. պահպանված է ժամանակագրության հաջորդականությունը, բայց համառոտված ու կրճատված են վկայությունները, գահակալությունների տարիները կտրացված են, ամիսները չեն նշված, երբեմն բաց է թողնված վկայության մի մասը, որոշ վկայություններ, տեղի նեղության պատճառով, մի քանի տող են զբաղեցնում և մի փոքր խախտում հաջորդ վկայության ճիշտ տեղը (որը սկզբից նշվում է գծիկով):

Գորգը հարազատ է մնացել Ղուկասի ընդօրինակությանը, նրա ոգուն, իսկ Ղուկասը, իր հերթին, հարազատ է Եվսեբիոս Կեսարացու բնագրին: Այս միաժամանակ հուսադրում է, որ Դավիթ քահանան և Ղուկաս գրիչը հարաշատ պետք է եղած լինեն նաև իրենց ժամանակագրության մյուս աղբյուրին՝ Աթանասի «Ժամանակագրությանը», իսկ Գորգը՝ նրանց:

Նախ պարհենք, թե ո՞վ է Աթանասը, և որոնք են նրա ժամանակագրության սահմանները, իսկ ապա՝ որոնք են նրա սկզբնաղբյուրները և ինչպիսի հարազատություն ունեն Գորգի ընդօրինակության հետ:

Աթանասի «Ժամանակագրության» մասին առաջին անգամ հայ մատենագրության մեջ այստեղ է հիշատակվում և ներկայացվում երկը՝ ձևափոխված: Աթանասի երկը պետք է որոշ առավելություններ ունենար Եվսեբիոսի գործի նկատմամբ, որպեսզի Դավիթն այն օգտագործեր: Բանն այն է, որ նա իր 981 թ. ժողովածուի մեջ արդեն ուներ «Առաջին մենիշխանութեան Հռովմայեցուն» երկը (Գալոս Յուլիոս Կեսարից մինչև Հերակլիս), զետեղված Անդրեասի ժամանակագրության վերջում և «Կայսերք Հռոմմոց թէ որչափ ամբ կալան կամ ամիսք եւ զինչ գործք գործեցան» ժամանակագրությունը՝ նույն ժամանակահատվածի սահմաններում:

Հիրավի, Աթանասի ժամանակագրությունը մի մեծ առավելություն ուներ. Աթանասը հայ էր և նրա «Ժամանակագրության» պատմական վկայություններն առնված էին հայոց պատմությունից: Ուրեմն նրան պետք է փրնտրել գրերի գլուտից հետո մինչև ձեռագրի գրության ժամանակը, այսինքն՝ V—X դարերում: Բացի այդ, ժամանակով Աթանասը ավելի է մոտենում Դավթին, ուստի Եվսեբիոսի IV դարում ընդհատված Հռոմմոց ժամանակագրությունը կշարունակվի մինչև Աթանասի ժամանակաշրջանը: Այս էլ ենթադրել է տալիս, որ Աթանասի ժամանակագրությունը զուտ հայկական չի եղել, և նրանով լրացվել է Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրության թերին: Բայց մինչև ե՞րբ: Այս և մի շարք հարցերի ճշգրիտ պատասխանը տալիս է Աթանասի «Ժամանակագրություն»-ը:

Բովիլն էլ է երկմտում, գրելով «Ժամանակագրությունն սկսվում է 1 թ. (մ. թ.) և հասնում մինչ 1032 թ.: Բնագրում, որոնցից հետո սլոնականների մեջ տարեթվերի նշումը շարունակվում է, բայց դրանց դիմաց վկայություններ չեն նշված... Ժամանակագրության մեջ հեղինակին ժամանակակից և նրան ժամանակով մոտ շրջանի մասին, դժբախտաբար, ոչ մի տեղեկություն չկա: Եղած վկայությունները խիստ համառոտ են, իսկ երբեմն էլ ձեռագրի հնությունից վնասված: Այդ պատճառով էլ ժամանակագրության աղբյուրների մասին որոշակի բան ասելը դժվար է (Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. 2, Երևան, 1956, էջ 1—2):

Ժամանակագրության առաջին սյունաշարում, ուր Քրիստոսի ծննդյան 1 թվականից հետո իրար են հաջորդում տարիները, ՇՅԶ (556) տարում թըվաշարքն ընդհատվում է: Այս թվականը համընկնում է Հուստինիանոս կայսերի (20) և հայոց Մովսես կաթողիկոսի գահակալության Գ (3) տարիներին: Բաց թողնված 14 տարիներից հետո, Հուստինիանոսի ԼԴ (34) և Մովսես կաթողիկոսի ԺԷ (17) տարիների դիմաց գրված է «յԱղամա ցնոր թվականս ամք ՅՃՅԶ (6156), դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս յԼԴ (34) ամէս Յուստինիանոսի կայսեր եւ ՅԴ (304) էր Հոռոմի թուականս [Եւ ԼԱ (31) ամէն հոսորովա]»¹⁷: Սրանից հետո այլևս չի շարունակվում քրիստոնեական թվարկության հաջորդականությունը: Նրա փոխարեն սկսվում է Հայոց նոր թվականը Ա (1)-ից և շարունակվում մինչև 584 թ. Դվինի ժողովը:

«Ժամանակագրութեան» մեջ միայն հեղինակն ինքը Աթանասը կարող էր գրել «դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս» երբ «ՅԴ (304) էր Հոռոմի թուականս» և «յԱղամա ցնոր թուականս ամք ՅՃՅԶ (6156) էին», Այս նշանակում է Աղամից մինչև Քրիստոսի ծնունդը, ըստ Անդրեասի ԻՈ (5600) ամ է, +556=6156, նաև որ հոռոմեական թվականության առաջին հազարամյակից հետո, այսինքն 247 թ. սկսվող երկրորդ հազարամյակի 304 (ՅԴ)-րդ տարում (247+304=) 551 թ. կարգվում է հայոց նոր թվականը: Այդ հաստատում է Ստեփանոս Ասողիկը. «Եւ կարգեցին զթուական Հայոց... եւ Հայք յայդմ ամի և յայդմ ժամանակի ի բաց կացին ի Յունաց թուականն ՅԴ (304)»¹⁸:

Հայ մատենագրության մեջ հայոց նոր թվագրության կարգումը կապվում է Տարոնի Ս. Կարապետ վանքի առաջնորդ Աթանաս Տարոնացու անվան հետ: «Յամի տասներորդի հայրապետութեան սորա (Մովսես կաթողիկոսի—Ա. Ս.) և երեսներորդի առաջնորդի (31) ամին հոսորովա՝ որդոյ Կաւատայ արքայի Պարսից,— գրում է Հովհաննես Դրասխանակերտցին,— լցեալ բովանդակեալ շրջանակ բոլորակի հինգհարիւր երեսուն երկու ամաց, ապա ի հրամանէ մեծին Մովսէսի, քերթողք և գիտունք արուեստին եղին զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ. որ է շարժումն յառաջախաղաց և հիմն զանազան մասանց արուեստին»¹⁹:

Այստեղ կան հայոց նոր թվականության կարգման մանրամասները, բայց չկա գլխավորողի անունը: Այն մեզ տալիս է Կիրակոս Գանձակեցին. «Ապա հայրապետն Մովսէս ժողովեաց զհիմաստունն, որ էին ի ժամանակին յորս էր և Աթանաս ի վանաց սուրբ Կարապետին, և կարգեցին թուական Հայոց, որով ուղղեցեն զզատիկ տեառն այլովքն հանդերձ»²⁰: Այն հաստատում են մյուս մատենագիրները. ըստ Մխիթար Այրիվանեցու «552 (թուին) սրբոյն Մովսէսի կաթողիկոսի հրամանաւն Տարոնացին Աթանաս ի Գլակա վանից արար զտօմար Հայոց»²¹, «Զի նա էր տեղեակ տօմարի ամենայն ազգաց»²²:

Անդրադառնալով հայոց նոր թվականության հարցին, Մ. Օրմանյանը գրում է. «Տոմարական գործողությունը այնպիսի հաստատում կերպով է կապված Մովսեսի անվան հետ, որ անհնար է այն նրանից զատել և մի ուրիշ

¹⁷ Ժամանակագրության մի շարքով գրած էջերում, որ Գորգը հետագայում օգտագործել է «նույն ձևագրում» նախօրոք գրությունները դեղին ներկով ծածկելուց հետո, տողամիջում ընկած որոշ բառերը շատ աղտոտ երևում են և հնարավոր է լինում ընթերցել: Այդպես է նաև նոր թվականության կարգման վկայության վերջին մասը, ուր կարդացվում է. «ամէն Յուստինոսի կա[յսեր] Եւ ԼԱ (31) ամէն հոսորովա»: Ընդգծված մասը չկա երկրորդ անգամ արտագրված օրինակում:

¹⁸ Ստեփանոս Ասողիկ. Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 83:

¹⁹ Հովհաննես Դրասխանակերտցի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 65:

²⁰ Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 42:

²¹ Մխիթար Այրիվանեցի. Պատմութիւն ժամանակագրական. Ս. Պետերբուրգ, 1867, էջ 63:

²² Հովհանն Մամիկոնեյան. Պատմութիւն Տարօնոյ. Երևան, 1941, էջ 147:

հայրապետի հետ միացնել... Հայ եկեղեցու և հայ ազգի համար կատարյալ տոմար ունենալու նպատակով Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ «ի հրամանէ մեծին Մովսէսի, քերթողք, և գիտունք արուեստին» հավաքվում են Դվինի հայրապետանոցը, Գլակա Ս. Կարապետի մայրավանքի առաջնորդ Աթանաս Տարոնացու գլխավորությամբ և նորոգում են հայոց տոմարը»²³, Այս տեղի է ունենում 584 թ. Դվինում:

Դավթի հիշատակած Աթանասը Տարոնի Ս. Կարապետ վանքի առաջնորդ Աթանաս Տարոնացին է, որը կարգել է հայոց նոր թվականությունը, այն սկսելով 552 թ. և կադմել է տոմարական ՇԼԲ (532) տարեշրջանի աղյուսակ: Ժամանակագրությունը սկսելով Քրիստոսի ծնունդից հասցրել է մինչև նոր տոմարի հաստատման ժամանակը: 584 թ. դիմաց գրված վկայությունները լայնական թվականով գրված առաջին բնագրերն են, այսինքն Աթանասը ոչ միայն հայոց նոր թվական կարգողը, այլև այն գործարկողը, կիրառողն է: Իսկ թվաբան և Ղուկաս գրիչը այնուհետև ժամանակագրությունը հասցրել են մինչև 1035 թ.:

Այսպիսով, «Հռոմովոց ժամանակագրությունը» շարադրելու համար Դավթ քահանան օգտվել է Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրութիւն» կամ «Քրոնիկոն կանոն» աշխատությունից և Աթանաս Տարոնացու «Ժամանակագրութիւնից», ընդ որում, «Աթանասի ժամանակագրութիւնից» լրացրել է նաև «Հռոմովոց ժամանակագրութեան» Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» շարունակությունը:

Այժմ պարզենք Գորգի հարազատությունը Դավթի երկրորդ աղբյուրին՝ Աթանաս Տարոնացու «Ժամանակագրութեանը»: Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրության բնագրի համեմատությամբ համոզվեցինք, որ Գորգը և Դավթը հավատարիմ են մնացել հռոմեական վկայությունների սկզբնաղբյուրին: Բայց քանի որ Աթանաս Տարոնացու երկի բնագիրը մեղ չի հասել, որոշեցինք Աթանասի «Ժամանակագրութեան» աղբյուրները բացահայտել, ապա բնագրի և աղբյուրների համապատասխան վկայությունների համադրմամբ որոշել նրանց հարազատության աստիճանը:

VI դարում ապրող հայ մատենագիրը հայոց պատմությանը նվիրված ցանկացած աշխատության համար, բնականաբար, պետք է դիմեր իրենից առաջ ստեղծված մատենագիրներին, մանավանդ ազգային պատմությանը վերաբերող երկերին: Աթանասի ապրած VI դարին նախորդող ժամանակաշրջանի Հայաստանն ուներ Կորյուն, Եղիշե, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, պատմիչների մի ամբողջ աստղաբազուկ:

Առանց մեծ դժվարության պարզեցինք, որ Աթանաս Տարոնացին իր ժամանակագրությունը կառուցել է հիմնականում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» փաստական հարուստ նյութի վրա: Եվ նյութերն օգտագործել է ոչ միայն հայոց թագավորների, կաթողիկոսների և հայ իրականությունից վերցված վկայությունների, այլև հռոմեական կայսրերի, պարսկական թագավորների և սրանից դուրս ուրիշ դեմքերի ու դեպքերի վերաբերող վկայությունների համար:

Ժամանակագրական ցուցումները (տես վերջում) ցույց են տալիս, որ Աթանաս Տարոնացու «Ժամանակագրութեան» Քրիստոսի ծննդյան թվականից մինչև փրկչական թվականն ընկած ժամանակահատվածի պատմական վկայությունների հիմնական աղբյուրը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է, որից քաղված 74 պատմական վկայություններից 55-ը վերաբերում են հայ իրականությանը, 7-ը՝ պարսկական թագավորներին, 12-ը՝ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից» հետո (Կոստանդին մեծից մինչև Թեոդոս փոքր) եկած հռոմեական կայսրերին: Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն»

23 Մ. Օրմանյան. Ազգապատմ. Բեյրութ, 1959, էջ 569:

ներք» քաղված է 4 վկայություն: Սրանցից հետո «Ժամանակագրութեանը» սկզբնաղբյուր է ծառայել Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը», որից բերված վկայությունները միշտ չէ որ քաղված են բառացիորեն: Այդ վիճակը, թերևս, Գորգի համառոտման և խմբագրման հետևանքն է:

«Ժամանակագրութեան» մեջ, այնուհետև, բերված է հայոց կաթողիկոսների շարքը Բաբկեն Ոթմսեցուց մինչև Մովսես Եղվարդեցի. այս տեղեկությունների աղբյուրը, հավանաբար, կաթողիկոսական դիվանն է: Այսպես՝ Բաբկեն Ոթմսեցի (9), Սամուել Արծկեցի (10), Մուշեղ Տեկորեցի (8), Սահակ Հարթացի (5), Քրիստափոր Տիրառճեցի (6), Ղևոնդ Առեստեցի (3), Ներսէս Աշտրկաց (9), Հովհաննէս Մնձվեցի (14), Մովսես Եղվարդեցի (30): Այստեղ ավարտվում է Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը: Խորենացուց հետո մինչև 534 թ. 24 վկայություններից 12-ը հայկական է, 12-ը հունական և ուրիշ:

Այսպիսով, մենք ունենք VI դարում, ավելի ստույգ՝ 534 թ. ավարտված մինչև այսօր անհայտ մատենագրական մի երկ՝ որի հեղինակը Աթանաս Տարոնացին է:

Աթանաս Տարոնացու «Ժամանակագրութիւնը» առավել ևս թանկագին է իր օգտագործած սկզբնաղբյուրով, Մովսես Խորենացու «Հայոց պատմութեամբ», որով ինքը դառնում է Մովսես Խորենացու՝ V դարի անսասան «տեղաբնիկություն» ազնիվ վավերագիրը: Եվ ոչ միայն Խորենացու «Հայոց պատմության» օգտագործմամբ, այլ նաև Պատմահոր վերաբերյալ եզակի վկայությամբ: Խորենացու Պատմությունից քաղած վերջին վկայությունից հետո, փրկչական 451 թվականի Վարդանանց պատերազմից, 466 թ. Կյուտ կաթողիկոսի մասին վկայություններից հետո գրված է. «նշԴ (474) Մովսէս Խորենացի փրկիսոփա և մատենագիր»²⁴:

ՆշԴ—474 թ. պետք է լինի Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց Մեծաց» երկի ավարտման թվականը, քանի որ այն չի կարող լինել Խորենացու ո՛չ ծննդյան (նա Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից է), ո՛չ էլ մահվան (Սամվել Անեցին նրան հիշատակում է 492 թ. շարականներ հորինելու առթիվ)²⁵ թվականը: Աթանասի մոտ Ափրիկանոս պատմագիրը հիշատակվում է Ուռհայի պատմությունը գրելու առթիվ, Սահակ Պարթևը՝ հայ դպրությունը փոխելու, Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրերն ստեղծելու, նրանց աշակերտներ Եղնիկն ու Հովսեփը՝ թարգմանություն կատարելու առթիվ²⁶, Մովսես Խորենացի մատենագիրն էլ, բնականաբար, իր «Պատմութիւն Հայոց Մեծաց» հրաշագան մատյանն ավարտելու առթիվ պետք է հիշվեր, մանավանդ որ Աթանասի նշած 474 թ. համընկնում է Խորենացու Պատմության ավարտման վերաբերյալ ուսումնասիրողների բանասիրական քննությունների եզրահանգումներին, որոնց առաջարկները տատանվում են 470—482 թթ. միջև:

Աթանաս Տարոնացին վերջ է տալիս այդ տատանումներին: Մովսես անվան կողքին ավելացնելով Խորենացի մականունը, «Փրկիսոփա» կոչման կողքին՝ «մատենագիր» մակդիրը, ամբողջացնում է անձը և տեղավորում ժամանակագրության մեջ նրա խոշորագույն Մատյանի ավարտման՝ 474 թ. դիմաց, երբ տեղի է ունեցել Խորենացու բառերով՝ «Աւարտումն... պատմութեան Հայոց Մեծաց»²⁷:

Աթանասի վկայության մեջ Մովսես Խորենացի փրկիսոփայի հիշատակությունը նախ և առաջ հաստատում է Ղազար Փարպեցու «Երանելի փրկիսոփա Մովսէսի» հետ նրա նույնությունը: Մովսես Խորենացին ամենից առաջ

24 Զեռ. № 2679, էջ 162ա:

25 Սամվել Անեցի. Հաւաքմունքի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 71. «նԴ (492) Մովսէս Քերթոզահայր: Ը. զոր ծննդեան, զԱպաշխարութեան և զՂազարու, զՏեառն-նդառաջին շարական ասացեալ է»:

26 Զեռ. № 2679, էջ 161ր:

27 Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 366:

Հայտնի է, եղել որպես փիլիսոփա, որի ստեղծագործությունները չլուսավորիչ և տգիտահալած գրքեր էին», որ չէին ընդունվում տգետների կողմից: Հայոց մեծ փիլիսոփա Մովսեսին Գյուտ կաթողիկոսի գահակալության տարիներին հիշում է Ստեփանոս Ասողիկի «Պատմութեան» սկզբնաղբյուրը. «Զկնի տեան Յովսեփայ կալաւ զաթոռ հայրապետութեան տէր Գյուտ ամս Ժ (10), որ էր ի գաւառէն Վանանդա, Յովսեփայ գեղջէ: Եւ յայսմ ժամանակի էր մեծ փիլիսոփայն Հայոց Մովսէս, որ ճարտասանական արուեստ ի զործ առնու ի Հայս»²⁸:

Ճարտասանական կամ հոետորական արվեստը հունական կրթական համակարգի առաջին աստիճանն էր, հետագայում կարգավորված յոթ ազատ արվեստներից առաջին երեք գիտությունները՝ «տրիվիումը»՝ քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն: Եռյակ գիտությունները երբեմն կոչվում էին մեկի անունով՝ այս դեպքում՝ ճարտասանական կամ հոետորական արվեստ²⁹:

Հելլենական կրթության համակարգի առաջին աստիճանը՝ եռյակ արվեստները հայ իրականության մեջ արմատավորում է Մովսես Խորենացին: Նա քերական էր, այսինքն՝ քերթող, ճարտասան, փիլիսոփա, մատենագիր և Բագրևանդի դպրոցում, որը հիմնադրել էր Սահակ Պարթևը, ապա այնտեղ դասավանդել էր Ղևոնդ Երեցը³⁰, ճարտասանական դաստիարակություն էր տալիս հայորդիներին:

Մովսես Խորենացու ջանքերով ճարտասանական ուսումը Հայաստանում գործարկելուց հետո միայն հասկանալի է դառնում Դավիթ Անհաղթի քառյակ արվեստի ուսուցման անհրաժեշտության թելադրումը և Անանիա Շիրակացու կողմից նրա գործադրումը: Այլապես առանց առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի ուսուցումն աներևակայելի էր: Քանզի «Պարտ է նախ ի բնաբանականէն ամբռնալ զուսումնականն և անտուստ զաստուածաբանականն»՝ յովորեցնում են Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին և Գրիգոր Մագիստրոսը³¹:

28 Ստեփանոս Ասողիկ, էջ 79: Այս և մի շարք այլ փաստեր ցույց են տալիս, որ Ստեփանոս Ասողիկը ծանոթ է եղել Աթանասի ժամանակագրությանը և օգտվել է նրանից: Ինչպես հայտնի է, Վոսմշապուհի թագավորության տարիները Մովսես Խորենացին քսանմեկ գիտի: Այդքան գիտի նաև Աթանասը, ուստի և այդքան էլ նշում է ժամանակագրության տարիների հերթաշարքում... Բայց վկայում է Վոսմշապուհ ամս ԺԵ (15): Նույնն է գրում Ասողիկը՝ ԺԺԵ (էջ 14): Արշակ Բ, Խորենացի՝ 30, Աթանասը՝ տարիների շարքում՝ 30, վկայում է ձ, իսկ Ասողիկը 7(6): Գյուտ կաթողիկոսը Փարպեցու մոտ Արահնդացի է, Աթանասի մոտ՝ Ոթմսու գյուղից: Եթե գաւառէն Վանանդա, Յովսեփայ գեղջէն (էջ 79): Նույնն է Ասողիկի մոտ: Այս թերևս շփոթված է Գյուտի հաջորդ՝ Հովհան Մանգակունուց հետո եկած Բարկեն կաթողիկոսի ծերնդավայրի հետ. որ էր Եթ գաւառէն Վանանդայ, յՈթմսոյ գեղջէն (էջ 81): Եթե այդպես է, ապա երկուսի ոխալը կամ աղբյուրից է. կամ վերջինը՝ առաջինից:

29 Մյուս շորս գիտությունները՝ թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն և աստղաբաշխություն, դարձյալ հետագայում, կոչվում էին քառյակ արվեստ, երբեմն՝ երկրաչափության անունից՝ երկրաչափություն, կամ համարողության (թվաբանության) անունից՝ համարողական արվեստ: Քառյակ արվեստը կամ համարողությունը Հայաստան է բերել Անանիա Շիրակացին VII դարի 60-ական թթ.: Դավիթ Անհաղթը, խոսելով «քառից արհեստի» մասին, գրում է. «Պարտոն իսկ զգուշացուցանէ այսպէս իւրում Աստուածաբանութեանն. «Ան-երկրաչափական ոք մի ներամտեցէ» (Դավիթ Անհաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք. համահավաք քննական բնագիրը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի. Երևան, 1980, էջ 36): Գրիգոր Մագիստրոսը բացատրում է. «Զայսոսիկ ասելով. գի մի ոք անկատար ի քառիցն ենթակայէ մտցէ ի լսարանն» (Գրիգոր Մագիստրոսի Թղթեր. Ալեքսանդրապոլ, 1910, էջ 9): Այստեղ «աներկրաչափական» նշանակում է «քառյակ արվեստ» շիմացող:

30 Ե. Քասունի. Ղևոնդ Երեց իբրև դաստիարակ և թարգմանիչ և Բագրևանդու դպրոցը.— Ամենուն նոր Տարեցույց 2 և է տարի, 1941, 1942, էջ 102—108:

31 Գրիգոր Մագիստրոս, էջ 8:

Մաշտոցահիմն դպրոցներում քերականությունն առաջին անարկաններից էր, որ դասավանդում էին: Աստիճանաբար լրացվում էր նաև մյուս գիտությունների մոծումը ուսման ծրագրում, որոնց համար անհրաժեշտ էին և՛ ժամանակ, և՛ ուսուցիչներ, և՛ աշակերտներ: Խորենացու ապրած ժամանակ ներավոր էր իրականացնել ճարտասանական կրթությունը Հայաստանում, որի ռահվիրան քերթողահայրը եղավ:

Ահա այդ հաստատող մի վկայություն ևս Ասողիկի մոտ. «Եղրաս Անդեղացի աշակերտ ճարտասանին Մովսեսի եպիսկոպոսի Բաղրևանդ գաւառի զդասս ճարտասանիցն բազմացուցանեա»³², Եղրասը Խորենացու աշակերտներից էր, որ փոխարինում էր ուսուցչին «ճարտասանական ուսումն ի գործ առնելով» և ճարտասանների դասը բազմացնելով: Այդ դպրոցի սաներից էին նաև Քրիստափոր և Ներսես Բագրևանդցի կաթողիկոսները: Որ Խորենացին ճարտասանական ուսում է ստացել, երևում է նրա «Հայոց պատմությունից» և նրա մեջ արված խոստովանություն-ակնարկներից:

Առաջինը նախաբանում է: Իշխան Սահակ Բագրատունին (հետագայում սպարապետ և զորավար), պատվիրում է Մովսես Խորենացուն «զազգիս մերո կարգել պատմութիւն ճշտիւ»: Այս բանը շատ է դուր գալիս Մովսես Խորենացուն երկու պատճառով. (ա) «որ և սիրելի իսկ իմոցս ախորժակացն է, (բ) առաւել ևս սովորութեանցս»³³, այսինքն որ նախ իրեն հաճելի է ազգի ճշմարիտ պատմությունը գրելու գաղափարը և համապատասխանում է իր մտադրությանը, և երկրորդ. «առաւել ևս սովորութեանցս»: Ուրեմն պատմութեամբ զբաղվելը, պատմություն գրելը նրա սովորությունն է եղել. նրա «հանապազօրյա ընթացքը», «ամենօրյա զբաղմունքը»: Նա ամեն օր՝ այդ գործով կարող էր զբաղվել ճարտասանական դպրոցում, ուր քերականության դասերին նաև գրականություն էին պարապում, հոնտորության հետ՝ պատմություն, օրենքների ուսուցում, տրամաբանության հետ՝ փիլիսոփայություն:

Մյուս ակնարկը Պատմության վերջում է, «Ողբի» մեջ: Սահակ և Մեսրոպ ուսուցիչները իրենց սաներին ուսում տալուց հետո ուղարկում են արտասահման կատարելագործվելու: Ավարտելուց հետո Խորենացին ընկերների հետ վերադառնում է հայրենիք և ուրախանալու փոխարեն տխրում է, որովհետև ուսուցիչները մահացել էին. «Աւա՛ղ զրկանացս, աւա՛ղ թշուառական պատմութեանս... Քանզի ծնան զիս իւրեանց վարդապետութեամբն և սնուցին, առ այլս առաքելով աճեցուցանէլ:

Եւ մինչ նոքա զմերն յուսային զդարձ, և պառուսսիւրել իմով ամենիմաստ առուեստիւ և կառարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել, անվեհեր երազութեամբ կրթեալք, և առագաստի ասել երգս,— արդ փոխանակ խրախճանութեանս ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ... Ո՛վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ո՛վ ուրախացի ընդ յառաջադիմութիւնս աշակերտիս, ո՛վ զհայրականն բարբառեսցի զուարեութիւն, մասամբ ինչ յսղթահարեալ յորդույս»³⁴:

³² Մովսես Խորենացուն է վերաբերում Ասողիկի նաև հետևյալ վկայությունը՝ «Յայսմ ժամանակի (Գլուտ կաթողիկոսից հետո, Հովհան Մանդակունու ժամանակ) Մամբրէ եղբայր Մովսիսի, զորմէ ասէն երրորդ դտեալ ի փիլիսոփայս, դառնայր ի Հայս, և Դաւիթ՝ աշակերտ Մովսիսի ի Հարք գաւառէ, ի Հերեան գեղջէ» (Ա տ հ փ ա ն ո ս Ա ս ող ի կ, էջ 81, 82):

³³ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ ի, էջ 5:

³⁴ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ ի, էջ 360—362: Քննվող հատվածը Ն. Ալիևյանը թյուրիմացաբար համարում է «անծանոթ գրչի անճաշակ փոփոխություններ և հավելվածներ», որ եղակի դեմքը փոխել է հոգնակիի և հետևողական չէ.— (Հանդես ամսօրյա, Վիեննա, 1930, էջ 39: Ընկալն, ինչպես իրավացիորեն նկատում է Ստ. Մալխոսյանը, «Խորենացին հոգնակի ձևն է գործածում, երբ խոսում է իր և ընկերների մասին, որոնց հետ գնացել էր Ալեքսանդրիա և վերադարձել, իսկ եզակի ձև է գործածում, երբ խոսում է միայն իր մասին» (Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն ա Յ ի. Հայոց պատմություն. Երևան, 1981, ծան. 351, էջ 534):

Հնդգծված նախադասությունները՝ «որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ... Ո՞վ պետք է ուրախանա իր՝ աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի առաճառյալ տեսնե՝ մասամբ իր՝ որդուց հաղթվելով», վերաբերում են իրեն՝ Մովսես Խորենացուն և իր սովորած-տիրապետած «ամենիմաստ արվեստին», որը պետք է տարբերվեր մյուս աշակերտների սովորածից, այլապես բոլորի (ներանց մեջ և ինքր) մասին հոգնակի խոսելուց հետո չէր նշի միայն իր «ամենիմաստ արվեստը և լիակատար պատրաստությունը», որի համար ուսուցիչները ոչ միայն շատ կուրախանային, այլև՝ «կհաղթվեին» աշակերտից:

Մովսես Խորենացին կատարում է ուսուցիչների հանձնարարությունը. նա ճարտասանական ուսում է ստանում և ապա՝ արմատավորում է Հայաստանում: Ուրեմն ուսուցիչները նրան հանձնարարել էին հմտանալ ճարտասանական ամենիմաստ արվեստի մեջ, լիակատար տիրապետել ուսումնական այդ համակարգը՝ Հայաստանում կենսագործելու համար: Ճարտասանության բազմիմաստ արվեստին տիրապետող անհատը արդարացիորեն պետք է կոչվեր քերական ու քերթող, ճարտասան ու փիլիսոփա, իսկ համակարգը հայրենիքում առաջինը կիրառելու, քերթողներ պատրաստելու համար՝ «Քերթողահայր», որպիսին էր Մովսես Խորենացին:

Պատմության, առավելապես և հայոց պատմության հարցերը, Խորենացին քննել է ամեն օր, տարիներ շարունակ, և նրա աշխարհայացքը, տեսակետներն ու սկզբունքները գետաքարի մշակվածություն ունեին, ինչպես երևում է Պատմության ջարդարանքից: Նա վաղուց ուներ հայոց պատմության շարադրման և՛ գաղափար, և՛ ծրագիր, և՛ անհրաժեշտ նյութ: Նրան պակասում էր մի գործվոր ձեռք, որ իր մտքերին մագաղաթյա մատյանի տեսք տալու առիթ դառնար: Սահակ Բագրատունին այդ աջը եղավ: Ջի և ազգի ես նախնականի, և քաջ, և արգասաւոր ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս, այլև ի մեծամեծս և ի բազում գործս արժանափառս, զորս յիշատակեսցուք ի կարգի պատմութեանս, յորժամ որդի ի հօրէ ծննդաբանելով, ազգաբանիցեմք գրովանդակն: Իսկ զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն զուստն և զզիարդն յայտնելով համառոտ և հաստի, որպէս ի յունականս ոմանս կայ ի պատմութիւնս»³⁵:

25 Նույն տեղում, էջ 7: Հայաստանում հունական ուսումնական համակարգը արմատավորելու, հունական գիտության, մատենագրության ու փիլիսոփայության ավանդներին հավատարիմ մնալու մեջ պետք է փնտրել Խորենացու նկատմամբ եղած անբարյացակամություններն ու հակաձանքները և ոչ նրա կարծեցյալ քաղկեդոնականության: Այս հարցում ճիշտ է Ծ. Տեր-Մինասյանը («Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը», «Դարձյալ Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը», տե՛ս Ծ. Տեր-Մինասյան. Պատմա-բանասիրական հետազոտություններ. Երևան, 1971, էջ 209, 279): Խորենացին գրում է, որ ինքը չի «տատանվում ամբողջ Հունաստանը գիտության մայր կամ դայակ կոչելու»: Այս ոչ միայն Հունաստանի, իսկապես բարձր գիտական մակարդակի համար և այն բանի, որ մեր ազգի պատմությունը շարադրելիս նրանց պատմագրության ու փորձի վրա է հենվում ինքը, ովքեր որ հույները «մեծամեծ և զարմանալու արժանի արվեստները, որոնք այս և այնտեղ դժգոյարութեամբ գտնելով, փոխադրեցին հույն լեզվի... և գովելի են ինչպես ուսումնասիրողները՝ ուրիշներից ձեռք բերելու իրենց ջանքի իմաստության համար, նույնքան ևս ավելի նրանք, որոնք գիտության այսպիսի գյուտերն ընդունեցին և պատվեցին (Պատմություն, 1968, էջ 68—69): Ուրեմն գովեստի արժանի են ոչ միայն գիտությունը մոծողները, այլև ընդունողներն ու պատվողները: Այս վերջինը վերաբերում է ոչ միայն հույներին, որոնք զնահատել են նախնիների հոգևոր ժառանգությունը, այլև բոլոր նրանց, ովքեր այն ընդունում և պատվում են: Այս վերաբերում է նաև իրեն՝ Խորենացուն՝ և իր նմաններին, հույն գիտության նվաճումները ընդունողներին և պատվողներին, իրենց ժողովրդի համար իրենց հայրենիքում օգտագործողներին և զնահատողներին, և միաժամանակ ուղղակի պատասխան իրեն և իր նմաններին լզնահատող և հալածող Դանատյացիներին:

Խորենացին հիացած է Սահակ Բագրատունու մտքի բեղմնավորությամբ, որն առաջինն է այսպիսի մեծ գործ ձեռնարկել և իրեն առաջարկել է հետազոտություն կատարել՝ երկար ու շահավոր գործով զբաղվել մերո կարգից զպատմութիւնն ճշտիւ թագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից, թէ ով յումմէ, և զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց և ով ոք ի ցեղիցս որոշելոց ընտանի և մերազնեայ, և ոյք ոմանք եկք ընտանեցեալք և մերազնացեալք, զգործս և ժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել ի ժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ մինչև ցայժմ»:

Սահակ Բագրատունին խնդրում է գրել հայոց ազգի ամբողջական պատմությունը: Խորենացին կատարում է նրա ցանկությունը: Ժամանակին էր իշխանի առաջարկությունը, հանձարեղ էր Խորենացին, որ 474 թ. ստեղծեց Մատանը «հրաշագան յորինուածով» և պսակեց «Պատմութիւն Հայոց Մեծաց» անունով:

Այդ ժամանակվանից Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց Մեծաց» մատյանը դառնում է հայ ժողովրդի պատմությունն ուսուցանելու անփոխարինելի դասագիրք հայրենիքում և աշխարհասփյուռ հայ գաղութներում: Նրանից հետո ստեղծվում են հայոց պատմության նորանոր ձեռնարկներ, որոնցում արտացոլվում է մեր ժողովրդի ինչպես անցյալի, այնպես էլ հետագա շրջանների պատմական ընթացքը: Այդ պատմագրքերի բոլոր հեղինակները ուղղորդում են նրանից, ականածանքով գրում Մովսես Խորենացու մասին, մեծարելով Քերթովհայր պատվանունով, իսկ նոր ժամանակներում նրան հայոց Պատմահայր են կոչում և «Հայ Հերոդոտ»:

Ավելի քան հազար հինգ հարյուր տարի է, որ Մովսես Խորենացին իր սքանչելի Մատյանով մասնակցում է հայ մտավոր կյանքին, որպես մեկը ազգային մտածողության աներեր տիրակալներից, որին ոչինչ չի կարողանում դուրսն ինչ անջատել իրեն ծնող V դարից ու հազարամյակներ քայլող մայր ժողովրդից³⁶:

36 Մովսես Խորենացու ժամանակներից նրա մասին պահպանվել են մատենագրական հետաքննվելով վկայությունները. առաջինը «Արհեստիւնաբեր» ցուցակն է, որտեղ նա հիշվում է որպես Ռահակ Պարթևի հանձնարարությամբ սերմորհների բերող և այդ ցուցակը կազմող (Ձեռ. № 2607, էջ 356, 1300 թ.): Երկրորդ վկայությունը Աթանաս Տարոնացու ժամանակագրության մեջ 474 թվաշարքում Մովսես Խորենացու անվան հիշատակությունն է, որի մասին խոսք եղավ վերևում: Երրորդը նույն գրքի պատմիչ Ղազար Փարպեցու վկայություններն են: VI դարում, տոմարագետ Աթանաս Տարոնացու վկայություններից բացի, 576 թ. ունենք Սյրոյ վարդապետաց Հայոց Մովսէսի և Դաթի Հարցմունք ընդ երկաթեակ շարափառսն» երկի ընդօրինակության մեջ (ստացող՝ Գուրգեն Հայոց Մեծաց քարտուղարը): VII դարում Անդրեասի ժամանակագրության հայ թարգմանիչը երկի սկզբում դնում է Մովսես Խորենացու Պատմությունից մի մեծ հատված և այն վերնագրում «Մովսեսի Խորենացու և Անդրեասի (ժամանակագրութիւն)» (Ձեռ. № 2679, էջ 29ա—30բ): «Մովսես Կաղանկատվացի իր Պատմության մեջ շատ բան բառացի փոխ կառնե Խորենացիին»,— գրում է Հ. Աճառյանը: Ապա զույգ պատմիչներից առած երկու հատվածները համեմատելով, ավելացնում է՝ «Կաղանկատվացի իր Պատմության մեջ առ ընդ նաև կհիշե Խորենացին, Մովսէս Քերթովհայր ծանոթ անունով: Պարզ է ուրեմն, որ Կաղանկատվացին կատարելապես կճաննեա Խորենացին» (Հ. Աճառյան. Բանասիրական ուսումնասիրություններ. Երևան, 1976, էջ 9—11): Մովսես Խորենացին հիշվում է Սևրեոսի Պատմության մեջ (Պատմութիւն Սերէոսի, Երևան, էջ 55): Խորենացու Հայոց պատմության համապատասխան տեղերի օգտագործմամբ ընդարձակ Կորյունից կազմվում է համառոտ Կորյուն ե մուծվում Տոնական ժողովածուի մեջ: Այն կազմել է Հարանց հայր Սողոմոն Մաքենացի վարդապետը, 747 թ. (Կորյուն. Պատմութիւն վարուց և մահվան. սրբոյն Մեսրոպայ վարդապետի. Թիֆլիս, 1913, էջ 44—66):

ԶՈՒԴԱՀԵՌ-ՅՈՒՆՈՒՄՆԵՐ

Աթանաս Տարոնացու (ԱՏ) «Ժամանակագրության» (Մատենադարան, ձեռ. № 2679, էջ 159ա—161բ), Մովսես Խորենացու (ՄԽ) «Պատմության Հայոց» (Տփղիս, 1913) և Ագաթանգեղոսի (Ագ) «Պատմության Հայոց» (Տփղիս, 1909) երկերի: (էջերը նշված են ցուցումներով վերջում՝ փակագծերում)³⁷:

ԱՏ «Արգար 12 (36+2=38)»:

ՄԽ «Թագաւորէ Արդար որդի Արշամայ ի քսաներորդ ամի Արշարի արքայի պարսից» (142): «Եւ սորա երկրորդ ամի Թագաւորութեանն... լինի ծնեալ փրկիչն մեր Յիսուս Քրիստոս որդի Աստուածոյ» (148): «...Վախճանի Արգարիոս, Թագաւորեալ ամս երեսուն և ութ» (156):

ԱՏ «Դալ քղթին Արգարու առ տէր»:

ՄԽ «Թուղթ Արգարու առ փրկիչն» (149): «Որոյ տարեալ զթուղթն (Արգարու) պատահեցին նմա յնրուսդէմ» (150):

ԱՏ «Սանատրուկ քաղաւոր, ամս 1 (30)»:

ՄԽ «Սանատրուկ ի Հայս» (157): «...Թագաւորեալ երկոտասաներորդի ամի Արտաշիսի արքայի պարսից կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ յորսի» (161):

ԱՏ «Երուանդ քաղ[աւոր], ամս ԻԱ (21)»:

ՄԽ «Փոխանորդէ զՏիրան եղբայր իւր Տիգրան, Թագաւորեալ Հայոց ի քսաներորդի ամի Դարեհի վերջնոյ» (161—162): «...Վախճանեցաւ (երուանդ) կալեալ զԹագաւորութիւնն ամս քսան» (173):

ԱՏ «Արաաշէս քաղաւոր, ամս ԽԱ (41)»:

ՄԽ «...Թագաւորացուցանէ մերս Արտաշէս զհամանուն իւր Արտաշէս որդի նորին ի վերահ Պարսից աշխարհին» (182): «Եւ սորա (Արտաշիսի) այսպէս սիրելի եղեալ աշխարհին մերոյ, Թագաւորեալ ամս քառասուն և մի» (191):

ԱՏ «Տիրան քաղաւոր, ամս ԻԱ (21)»:

ՄԽ «Թագաւորէ Հայոց Տիրան որդի Արտաշիսի երրորդ ամի Պերոդի առաջնոյ Պարսից արքայի... ի հանդարտութեան վարեաց զԹագաւորութիւն ամս քսան և մի» (193):

ԱՏ «Տիգրան քաղաւոր, ամս ԻԱ (21)»:

ՄԽ «Փոխանորդէ զՏիրան եղբայր իւր Տիգրան, Թագաւորեալ Հայոց ի քսաներորդի ամի Պերոդ արքայի, և երկայնակեաց ելեալ ամս քառասուն և երկու» (196):

ԱՏ «Արշակ քաղաւոր, ամս ԻԲ (22)»:

ԱՏ «Վաղարշակ քաղաւոր, ամս ԻԲ (22)»:

ՄԽ «Յետ մահուանն Տիգրանայ Թագաւորէ Վաղարշ որդի նորին երեսներորդի և երկրորդի ամի համանունն իւրոյ Պարսից արքայի» (199): «Սա Թագաւորեալ ամս քսան մեռաւ» (200):

ԱՏ «Բարգաման Ուրեյեցի, այր երեսի»:

ՄԽ «Զրուցէ մեզ զայս Բարգաման, որ յնդեսիայ... երկեցաւ պատմագրող» (201):

ԱՏ «Մահն Արտանաւ որդւոյ Վաղարշայ՝ յԱրաշարէ որդւոյ Ասանայ»:

ՄԽ «Արտանան ամս երեսուն և մի: Զսա սպանեալ Ստահրացույն Արտաշրի, որպէս Սասնայ...» (205):

ԱՏ «Խոսրով քաղաւոր, ամս ԽԸ (46)»:

ՄԽ «Եւ յետ անցանելոյ երկուց ամաց զալստեանն Անակայ ի Հայս՝ երրորդումն սպանանէ զԽոսրով, որ Թագաւորեաց ամս քառասուն և ութ» (212):

ԱՏ «Դալն Անակայ ի Հայս»:

ՄԽ «Յաղագս զալստեանն Անակայ...» (211—212): Գլուխն ավարտվում է այսպես. «Իսկ զմնացեալսն ի զրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (212):

ԱՏ «Անիշխան մեալ Հայոց ամս ԻԷ (27)»: Խորագրում՝ ԻԵ (25):

ՄԽ «Եւ կալաւ (Արտաշիր) զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհաց իւրոց, պարսիկ դործակալոց ամս քսան և վեց, և յետ նորա որդի նորին, որ անուանեցան Շապուհ, ամ մի» (216):

37 Աթանաս Տարոնացու ժամանակագրությունից բերված բոլոր վկայությունները շղատված են՝ Խորենացու Պատմությունից շղագրված են միայն համապատասխան վկայությունները պարունակող գլուխների խորագրերը:

ԱՏ «Արաաւասա Մանդակունի և Լիկիանէս կամ սնուցիչ Տրդատա ածեն. ի կայսր»:

Մհ «Կոստանովն ազգին Մանդակունեաց յԱրաւստէ» (217—218): «Արտաշէր լուեալ էր, թէ ոմն ի նախարարացն Հայոց առեալ զմի յորդոցն հոսրովայ, փախուցեալ ապրեցոյց, ի դուռն կայսեր հասուցանելով: ...նա ի Արտաւազդ յազգէն Մանդակունեաց...» (217) իսկ Տրդատա միայն ընդդէմ կացեալ չիթող զոր մտանել յապարանսն Լիկիանոսի, առ որում ինքն Տրդատ իր» (218):

ԱՏ «Խոսրով—Տրդատ» ԼՁ (36): «Շարքում» ԾՁ (56)

Մհ Քանգի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ և մանրութեան քննելով զտաք զթագաւորն Տրդատայ Երրորդ ամի Դիոկղետիանոսի...» (Աթանասի Վոստ. իրկրորդ, ինչպէս հոսրենացու Պատմութեան մի տարբերակովս (224): «Տրդատ» թաղաւորեաց ամս յիսուն և վեց» (250):

ԱՏ «Տրդատ յառաջին ամին ետ ճաւերս Անախաւ կապուտակ երիւն ի գեղն Երիզա»:

Ագ (Ալուքանգեղոս) «Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց Մեծաց, խազաշին Լիկին հասին յեկեղեցայ գաւառ, ի գեղն Երիզա, ի մեհանն Անախաւան, զի անդ զոսն մատուցեն» (30):

ԱՏ «Ելանէ սուրբն Հովնիսիմէ ի Հայք ՀԸ (78) ընդերաւ»:

Ագ «Սուրբն Գայիանէ սանականան Հովնիսիմեան և պարկեշտաժողով ընկերօքն հանդերձ, դէս Լեւել... գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, Կոր և Նորաքաղաքն կոչէին, ի նիստս թագաւորացն Հայոց» (34—35): «Եսկ Լին և այլք սուրբ... որ ընդ նոսա եկեալ էին, աւելի քան զԼեւոնաստուն մարդ» (107):

ԱՏ Ելն ի Վիրապէն»

Ագ «Նախարար զոմն աւագ... Օտայ... գնաց ի քաղաքն Արտաշատ՝ հանել զնա ի խորանտէ Վիրապին: Գրիգորիոս, Լիկ կայցէս ուրեք՝ Լկ ի դուրս» (115):

ԱՏ Տրդատ պատմեալս յԱստուծոյ»:

Մի «ՂԹ. Յաղագս վախճանի Տրդատայ թագաւորի, բնդ Երուս և ռըբերգական մեղադրութիւն...» (245—250):

Ագ «Յաղագսն միողէ յաղթահարեալ լինել կամօքն Աստուծոյ» (97—109):

ԱՏ «Սուրբ Գրիգոր. ամս Լ (30)»

Մհ «Յեւթն և տասաներորդի ամի թագաւորութեանն Տրդատայ զտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զհայրն մեր Գրիգորիոս և ըստ Աւետարանի՝ ծնող» (242): «Վասն որոյ յիսկական քահանայանալոյ նորա, յօթն և ի տասաներորդ ամի թագաւորութեանն Տրդատայ մինչև զքառասուն և վեցերորդն ամն նորին, յորժէ հետ ի նա յաւել ումեք երեւել՝ համարեալ թուին ըսմք երեսուն» (243):

ԱՏ «Գիտ Սուրբ Խաչին ի ձեռն Հեղինեայ»:

Մհ «...Յետ այնորիկ առաքեաց զՀեղինէ մայր իւր յԵրուսաղէմ ի խնդիր պատուական իւրին. զոր էւ եգիտ իսկ զփրկական փայտն հանդերձ հինգ րեւոք» (286):

ԱՏ Արիստի հերձուած»:

Մհ «Յաղագս Արիստի» (289):

ԱՏ «Աստ է սուրբ ժողովն Նիկեա ՅԺԸ (318) իցն»:

Մհ «Վասն որոյ ել հրաման յինքնակալէն Կոստանդիանոսէ՝ ժողով լինել թաղմութեան Հայկականոց ի Նիկիա Բիթանացոց»:

«Երթեալ Արիստակէս... ի քաղաքին Նիկիացոց, ուր հղեն ժողովեալ հարք երեք հարիւր և ութնտասն...» (239—240):

ԱՏ «Տէր Ռստակէս, ամս է (7)»:

Մհ «Եւ Լոտ նորա Արիստակէս, ամս եօթն» (243):

ԱՏ «Տէր Վրթանէս ամս ԺԵ (15). Երդիք տուա Գրիգորիս և Յուսիկ»:

Մհ «Յաղագս զաթոռ Լրեց եղբայր նորին Վրթանէս ի յիսուն և ի շորրորդ ամէն Տրդատայ և անդր» (244): «Գրիգորիս գերեց որդին Վրթանիսի» (259), «Յուսիկ որդի նորին» (269): Իսկ յետ լնոյ հնգետասան ամաց հայկականութեան մեծին Վրթանայ՝ փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ» (269):

ԱՏ «Փոքր Խոսրով թագաւորէ ամս Թ (9)»:

Մհ «Երկրորդ ամի Որմզդի Պարսից արքայի և յուրերորդ ամի Կոստանդիանոս յօգնականութեան նորին թագաւորեաց հոսրով» (264—265): «Թայց ոչ երկարեալ զկեանս իւր՝ վախճանի թագաւորեալ ամս ինն» (268):

ԱՏ ընդունվեց սր խաչին յերուսաղեմս:

Մհ թի սորա (Կոստանահայ) աւուրս երեւցաւ խաչն լուսեղէն առ երանելիան Կիրողի (երուսաղեմացոյ)» (270):

ԱՏ «Տիրսն քաղաւորէ ամս ԺԶ (16):

Մհ «Եթէն և ի տասաներորդի ամիս իւրում... Կոստանգոս... Թաղաւորացոցանէ զՏիրան որդի Խոսրովու (269): Խաւարեցաւ եւ ինքն Տիրան, կալիալ զթաղաւորութիւնն ամս մետասան» (276): Տարրեթերցվածում՝ վիշտասան:

ԱՏ «Ի սա գրեաց Կիրեղ զքաղաքն»:

Մհ «Եւ վասն դի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի (Եփեսոսի) մեծն Սահակ և Մեսրոպ՝ գրէն առ նոսա Կիրեղ Աղեքսանդրացի...» (342):

ԱՏ «Տէր Գալիկ ամս Զ (6), որդիք սորա Պապ, Աթանագիւնէ»:

Մհ «(Տէր Գալիկ) ևկաց Լալիսկոպոսութեանն ամս վեց» (272):

ԱՏ Տէր Փառնեւելն ի Տարաւեայ յԱստիշատէ՝ Դ (4):

Մհ «Ընդերկցին զՓառնեւելն ոմն յԱշտիշատոյ Տարոնայ... որ կալաւ զաթոռ ամս չորս» (275):

ԱՏ «Երեսէս ամս ԼԴ (34):

Մհ (Ներսէս) կալաւ զաթոռ Եփեսկոպոսութեան ամս երեսուն և չորս» (306):

ԱՏ Արշակ ամս Ը (8): Շարքում Լ (30):

Մհ «(Արշակ) Թաղաւորեաց ամս երեսուն» (301):

ԱՏ «Սա [Թեոդորոս մեծ] դարձոյց զԵրեսէս:

Մհ «Միւսն Ներսէս... աղաչեաց զինքնակալն Թեոդորոս... (սա) Թաղաւորեցոցանէ զՊապ որդի Արշակայ և ընդ նմա գումարեաց զօր բազում ի ձեռք քաղաքաւորսն Տերենտիանոսի: Իւ Մեծին Ներսիսի առեալ զամենայն նախարարսն... ածէ զՊապ յաշխարհս Հայոց» (302):

ԱՏ «Պապ քաղաւորէ է (7):

Մհ «Պապ... Թաղաւորեալ ամս ԽԾ (307):

ԱՏ «Սահակ ի Մանթիկերտայ, ամս (6):»:

Մհ «(Սահակ) կալաւ զաթոռն ամս չորս» (306):

ԱՏ «Շահակ ի Պապա առնու գաթոռն»:

Մհ «Ապա տեսեալ Թաղաւորին Պապայ սգացեալ զամենայն Հայս... եզիտ զոմն... որում անուն Շահակ... զոր կացոյց փոխանակ Ներսիսի» (306):

ԱՏ «Վարաստաւ քաղաւորէ Ե (5):»:

Մհ «(Վարազդատ)... Թաղաւորեաց ամս չորս» (309):

ԱՏ «Տէր (Ջալէն) Դ (3):»:

Մհ «Ջալէն... ամս չորս» (309):

ԱՏ «Արշակ և Վաղարշակ Ե (5):»:

Մհ «Արշակ Թաղաւորեաց ամենայն Հայոց ամս հինգ և կիսոցն Հայոց ամս երկուս և կէս» (316):

ԱՏ «Խոսրով քաղաւոր՝ Հայոց Դ (4):»:

Մհ «Թաղաւորեայ Հայոց Խոսրով ոմն ի յազգէն Արշակունեաց» (311):

ԱՏ «Տէր Ասպուրակէս Ե (5), լինի գաւակէ Աղբիւնոսի Հարփա Եփեսկոպոսի»:

Մհ «Եկաց Եփեսկոպոսութիւն Հայոց Ասպուրակէս ամս հինգ» (309):

ԱՏ «Վոսմշապուհ ԺԵ (15): Շարքում՝ ԻԱ (21):

Մհ «Վոսմշապուհ Թաղաւորեալ ամս քսան և մի մեռանի» (329):

ԱՏ «Սահակ ԽԲ (42) որդի Ներսիսի: Աստուաւ դպրութիւնն ի հայ փոխէր»:

Մհ «Կեցեալ Եփեսկոպոսութեամբ ամս յիսուն և մի» (355):

ԱՏ «Եզնիկ և Յուսեփ աշակերտք Սահակա»:

Մհ «Ապա եկեալ և առեալ Մեսրոպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփ և զմիւս ընկեր նմին ի Կողբ գեղջէ, որում անուն Եզնիկ կոչէր՝ առաքեն ի Միշապետս, ի քաղաքն Եզնիսիայ...» (341):

ԱՏ Մասրոք է (7) զիր յաւելեաց և շինեցաւ դպրութիւնն»:

Մհ «Գրիւռով ի վերայ վիմի...» (327):

ԱՏ «Ժողովն Եփեսոսի Մ (200)-ից»:

Մհ «Յաղագս ժողովոյն Եփեսոսի...» (342—343):

ԱՏ «Սուրմակ Յարձկեոյ, Փրփիշոյ և Շմակ է (7):»:

Մին սՍո՛ւմակա (Արժկէացի) ոչ յաւուր անեալ քառ զմի սմ... (349)։... զԹիթիշոյ ոմն ասորր... վարեալ ամս հրիս (349)։ ...Թայց Շամուէլ կեցեալ ամս Էրնգ... (354)։

ԱՏ Ժողովն ՃՄ (Հաւիւր յիսուն)։

Մին Վիտանգամայն հարիւր և յիսուն հարք որք նզովեալ մերժեցին զՄակեդոն...» (298)։

ԱՏ Արտաշիւր Զ (6)։

Մին Արտաշիւր... աիրեաց ամս վեց» (338)։

Այստեղ վերջանում է Աթանասի «Ժամանակագրության» Հայոց Պատմության վերաբերյալ Մովսէս Խորենացու Պատմությունից քաղված վկայությունները։

Ահա և Աթանասի «Ժամանակագրության» Հռոմեացիների պատմության հոնվսերիոսյան լատինական տարբերակի վկայությունները, որոնք քաղված են Մովսէս Խորենացու «Հայոց Պատմությունից»։

«Կոստանդիանոս՝ ամս 17 (34)» (237—239)։

«Կոստանդին թագաւորեաց ամս 19 (23)» (260—1, 264, 269, 270)։

«Յիդիանոս թագաւորեաց ամս Ա (1)» (273)։

«Յորիանոս թագաւորեաց ամս Ա (1)» (275)։

Վաղէս թագաւորեաց ամս ԺԱ (11)» (291—293)։

«Վաղէս արքորէ զնկիսէս յՈվկիանոս 28 (72) հպիսկոպոսաւր ամս Թ (9)» (293, 294)։

«Թէոդոս Մեծ թագաւորեաց ամս ԺԵ (15)» (254)։

«Արկադէս և Ոնորէս ամս ԻԴ (24)» (369)։

«Թէոդոս Փոքր ամս ԻԷ (27)» (328)։

Նրանով վերջանում է Աթանասի՝ Խորենացուց քաղած հռոմեական կայսրերի շարքը։

МОВСЕС ХОРЕНАЦИ И ХРОНИКА АТАНАСА ТАРОНАЦИ

А. С. МАТЕВОСЯН

Резюме

Один из отрывков «Римской хроники», исторического произведения, помещенного в рукописном сборнике (рук. № 2679 Матенадарака им. Маштоца, написана в 981 г.), изложен на основе хроник Евсевия и Атанаса. Упомянутая хроника, составленная переписчиком рукописи Гукасом и его отцом священником Давидом, охватывает время от Рождества Христова (1 год) до 1035 г. Рукопись составлена на основе римских и армянских исторических свидетельств. Сведения, касающиеся римской истории, почерпнуты из Евсевия Кесарийского и доходят до 327 г., далее следует параллельное изложение фактов армянской и римской истории. Исследование доказывает, что армянский календаровед Атанас и есть настоятель таронского монастыря св. Карапета Атанас Таронаци, учредивший армянское летосчисление, что следует из свидетельства, сохранившегося в самой хронике, завершённой им в 584 г. Атанас Таронаци продолжал свою хронику главным образом на основе данных истории Мовсеса Хоренаци. Он использовал также «Историю Армении» Агатангелоса и Лазара Парпеци, а для событий, происходивших после этого — католикоский диван. В хронике Атанаса Таронаци есть следующее свидетельство о Мовсесе Хоренаци «Եւ 474 թ. Մովսէս Խորենացի փիլոսոփ և իստորիկ». Եւ 474 — это 474 год, который мы считаем годом завершения автором «Истории Армении». Продолжение хроники является интерполяцией, внесённой священником Давидом и переписчиком Гукасом.